րեզմաններն ու անոնց տեղը տասնը-
չորս խորան աւելցուց։ Աչադ խորա-
նը իսիտ սիրուն շէնք է՝ պղնձէ կորըն-
թեան սիւներով զարդարուած, որ
Միլանցի Պիոս Դ պապին ընծան է.
ամպիոնները ոսկեզօծ մետաղէ են,
մկրտարանն ալ պորփիւրեան փառա-
ւոր կիճ մըն է որ Մաքսիմիլիանոս
կայսեր ատենէն մնացած է։ Դասին
չորս կողմը զանազան գերեզմաններ
կան. հոն է նաև սրբոյն Բարթուղի-
մէոսի մեծ արձանը։ Ուրիշ մէկ կողմն
ալ Պիոս Դ պապին Յովհաննէս Յա-
կոբոս Մետիչի ըսուած եղբօրը գե-
րեզմանը կայ։ Դրսի դրան վրայի
արձանագրութենէն կ'իմացուի որ ա-
ւագ խորանը Մարտինոս Ե պապը օ-
ծած է՝ երբոր Կոստանդիա քաղաքին
ժողովքէն ետ կը դառնար։—Աչ-
կեղեցւոյն մէկ յատկութիւնն ալ աս
է որ գրեթէ ամէն երևելի եկեղեցի-
ներէն առաջ շինուած է, բաց՝ի Կոս-
տանդնուպօլսոյ սրբոյն Սոփիայ ժա-
մէն. վասն զի ան ատեն ոչ Հռոմայ
սուրբ Պետրոսը կար, և ոչ Ղնտրայի
սուրբ Պօղոսը։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎԻՒՍ ՇԻՐԱԿԱՑ

Դ. Պարոնէ Հայոց։

Ղբնաղն և յաւէտ բաղձալի՝ ի քա-
ռահոլով արքանեակս տարւոյն դա-
րուն ծաղկապսակ՝ յետ դանդաղասէր
սառամանեաց ձմերայնոյն՝ ի նոր իմն
կեանս վերակոչելով զմարդ և զբնու-
թիւն, զուրախութեանն բաժակ ա-
ռատապէս մատուցակէ՝ ի սահմանս
գեղջեւոյ։ Աթոռք նորա արկեալ կան
յերկրի մերում յերկնանման հովիտս
բիւրակնեան բլրոց, և սահմանք նո-
րա յընդհանուրս ծաւալականք՝ Ա-
նրագած հանդիսական Հոխաբար։ Ամպ
յամպոյ իջանեն կենսաբեր նշոյլք ար-
փային Հառագայթից. սրանան ա-
ռուակք, ընդարձակին այերք՝ ի դայ-
լայլեկս հաւուց, և բուրաղուարձ գո-
լորշի՝ ի ցօղաթուրմն մարդայ իբրև
զխունկ շնորհակալեայ յօգս վերանայ։
Կանխաղեկոյց պարգևայ արարողին
բնութեան հմտացեալք՝ թռչունք ե-
լանեն դասք հովուայ յիւրաքանչիւր
հանդրուանայ երգովք ցնծութեան,
և մատաղերամ մանկաւոք և խա-
շամբք դաշթ տան, խաղան գնան յե-
րանաւէտ տուարածականն. և մինչ-
չև բաժանեալ ընդ այս և ընդ այն,
գան գումարին՝ ի մի վայր ըստ վաղն-
ջուց հայրենի սովորութեան, զգա-
ւուն տանել միախումբ, և բարձրացու-
ցանել զպարծանս նորա քան զհանուրց
եղանակաց։

Աբդ եկեալ հասեալ էին աւուրք
և տունք ամանորաբերք, և պարք հո-
վուացն Ա անանդայ՝ ի ժամադրեանն
հասանէին վայր. ծերունիքն ակումբ
առեալ նստէին, մանկունք զծաղկան-
ցըն պսակս հիւսէին, և երիտասարդք
և կուսանք զիւրեանց զգործիս և ըզ-
պարս կազմեալ պատրաստէին։ Աչ-
ահա յարուցեալ՝ ի մէջ անցաներ ըն-
տրեալն հաւասար կամաք ակմբին
դասապետ երգոց Փայլատն զուար-
թուն, ծերոյն Սիսակայ որդի. դի-
մացն կայտառութիւն, յստակագոյն
աչացն շրջաբերութիւնք, երիտներանդ
ծաղկանց պսակ ընդ խարտիշադեղ
գիսական անկեալ վայրապար, և վայել
ջանշնորհ ողջունատուութիւն առ ուն-
կընդրացն ժողով, նախերգանք իմն լի-
նէին հանդիսական նուագին։ Աչ ի-
բրև ողջոյնքն լռեցին, և լռին ունկըն-
դրութիւն կալաւ զակումբն, և գու-
նակք գունակք ծաղկանց սիռեցան
շուրջանակի, առեալ Փայլատայ զգե-
ղայօրէն զիւր ջնար ընկուզի զեօթնա-
ղին, ձեռն ձգեաց խաղաց մատամբքն
՝ի լար և՝ ի լար, և երգեաց այսպէս.
և գուսանացն յառաջագոյն կրթեալ
՝ի նմանէ զպարոյրս երգոյն կրկնէին.

Ի տէգն արի շնահեաց Հայկ,
Էջ 'ի Մասեաց հիւսիսակ.
Ի յորբանաց քաջքը հողմոց
Ի՛ջին գարունք մեր Հայոց.
Ցողք և բուրմունք, երգք երանգք
Նոր տան հովտաց և մեղ կեանք։

Ո՞ւր արտասուաց իմ ցողք 'ի գոս մարմանդին
Մինչ արտասած դնայն հանդէպ հիւսիսին,
Մասիս Թափէր զալեան ըզմէջք համասփիւռ,
Եւ 'ի Թմբիր նընջէր հովասացու զեփիւռ,
Ցայնժամ անիւք դիւեցան սառանց մեծ ուահեղք,
Դէպ երեսաց փախչէր աշուն մերկ և հեզ.
Տապատ յանդին գընէր ամառն ամայի,
Եւ, ո՜հ, Թէ չէր յոյս գարնայնոյն գեղանի,
Ոչքամբ մընայք ասեմ հովնաք հովասունք,
Քաղցրիկ խոնջք, լերինք մայրիք և ծաղկունք։
Ի տէգն արի շնահեաց Հայկ, և այլն։
Արդ ըսպանցի խարոյկ, ցուցան վարդենիք,
Զյետին ձրդեաց ձրմեռն 'ի լեառն ըզկընիք,
Զեամբն և ամպով մեկնեցաւ եղ 'ի փախուստ,
Ծագէ զգարուն Աստուած Հայոց 'ի վերուստ.
Տէր, ասացին հաքք մեր, շարժէ զամանակ,
Այլ անդրանիկ իւր է գարուն ազգէ յազգ.
Գայ պըտղալից ամառն, այլ նոյն տօթակէզ,
Ձրմեռն հասեալ ցրտասարսուռ պաղէ զմեզ.
Եւ յերկոցունց աշուն կոծեալ 'ի տատաք,
Թափէ զտերևս իւր և մեկնի ըստ ելեւէայն։
Ի տէգն արի շնահեաց Հայկ, և այլն։
Անդ ձիւնապատ լերանց պատուաքք տապալին,
Ցորձանք Թմբրեալք դան 'ի համբոյր ծործորին,
Ընդ բիւրեղեայ ամանուղս հոսեալ փրփրադէզ,
Կարկաչասահ գընան ընդ դաշտ ընդ երէց.
Գետք և վըտակք զնախկին առնուն ըզմրմունջ,
Աւետաւոր հողմոց ընդ օդ խաղայ շունչ.
Ծառք և ծաղկունք, լերինք և մայրք գոյն 'ի գոյն
Պըճնեալ կանգնին խոր յանդընդոց ցեղս օդոյն,
Ո՜հ մանուշակ, ո՜հ համասպրամ բազմաբոյր,
Հովտածիծաղ վարդ և շուշան լուսաթոյր,
Ո՞յերմնազարդ 'ի խնկաւոր ձեր 'ի Թերթ
Ոչ երդնուցու զգարուն տարբոյ սեթևեռթ։
Ի տէգն արի շնահեաց Հայկ և այլն։
Երանգ յերանգ խառնեալ Թռչի ծաղկանց հոյզ
Մինչև 'ի Հայկ մինչ 'ի դրայնն իւր 'ի բոյլ,
Ցողք 'ի վարսից նոցին կաթեն յորդառատ,
Տալ զարդասիս բազմաբեղուն և պարարտ.
Զեղուն հընչմամբ զոգս երաժիշտք Թըռչական,
Զանտառս ըզմարգս հանգոյն բամբռանցըն Գողթան
Ցոստս ուր տերևք դան ընդ ծաղկանց յեւեջ
Փափկիկ բընկանց կախեալ ըզհիւս նրբառէջ
Ի սիրասուն գրգռան հրմայս կենսուսնակ,
Եւ զերկնաթռիչ հանեն ծաղկանց ըզբանակ։—
Ի տէգն արի շնահեաց Հայկ և այլն։
Կապոյտ կամարն 'ի վեր, կանաչն 'ի ներքոյ,
Շող ոսկեթեղ յոգս անկանի կիտուածոյ.
Հօտն և հովիւք խայտան 'ի դաշտն հաւասար,
Ծնունդք արձակին, ո՜վ երջանիկ հովուաց պար.
Քաղցր հովանիք մեր տատանին 'ի մայրեաց,
Եւ զովագին շընչեն հողմունք 'ի Մասեաց.
Ցիրդ և ծոթերին ձնին դառանց կաթնաքուխ,
Կեռաս, ծիրան խայրիք մերձին մեզ կանուխ։
Ի տէգն արի շնահեաց Հայկ և այլն։
Ի թաւս ոստոց պտղին դամբանք և բագինք
Եւ դունագոյն ծաղկանքք պարեն հարանիք.
Այգուն այգուն ըստեմ բերբոցս 'ի դալար
Զորասընդիր փող փարաղանց մեր գալար,
Ի տառատոկ զբսպեալ թեթև գոտեպինդ
Ժիր մանկտի վայր 'ի վայրէ առնու թինդ,
Եւ խոյք Հայոց քաջաղեղանց առ ոտիւք
Վախից 'ի վախ վազեալ դէրին եղերուք.
Հաստամագիլ պացեալ բազէ կորակոտուց,
Զորսորդախաբ վրէժ լուծանէ զկաքաւուց։
Տօնք ամանորք 'ի վարդագեղն այն Վարդգէս
Զկենդանութիւն արփուն շընքեղ 'ի հանդէս,
Մինչ ոսկեկուռ Թագն և մական արքենի
Ցողջոյն բնութեան ցոլան 'ի դաշտս Հայրենի։
Ի տէգն արի շնահեաց Հայկ և այլն։
Ո՛վ գու գարուն, ջըքնաղ երկրիս Հայր և գանձ,
Աշուն ուսանան 'ի քոց փրթթին պերճ ծաղկանց,
Եւ ըզդալուկըն ձմերայոյ գու մաշես
Նընջեալ սերմանքդ 'ի ծոց երկրի սառնադէզ։
Գարուն, գու կեանք և գու հոգի ես բնութեան,
Քեզ ալեորք խայտան յաստիս մանկութեան.
Եւ թէ անդարձ օրէնք այս չէր Անմահին,
Ծաղկանց հանգոյն մեռեալքն 'ի կեանս յառնէին.
Սակայն բողբոջք 'ի գերեզմանս հարց ըսփիւռ
Զանմահութեան առհաւատչեայս տան մեզ բիւր,
Թէ և հոգւոց յերանաւէտն յԵրազմոյն
Զկիր յեղանակ այլ՝ բայց յաւերժըն գարուն։

Լուեաց Փայլատ, և յերկարագոյն ևս նուագս ձայնք ներ հնչէին 'ի սիրտս ունկնդրացն. մինչև յարեաւ ծերունին Սիսակ, և դողդողուն 'ի գթոյն քան 'ի հասակէն՝ հիւսեալ պսակ առ ձեռնպատրաստ 'ի ծաղկանցն սիրելոց, պսակեաց զփարելն Ձակատ երգողին, և արտասուախառն ասէ. "Ո՜յո, որ տայն մեզ զգարունս զայս, „ տացէ մերձ ընդ մերձ և զանանցն „ գարուն. և Փայլատայ որդւոյ ի„ մում տացէ յերկար աստէն և անդ „ անսպառ երգել զգարուն „։

ԲԱՐՈՑԱԿԱՆ

Վասն զօրավարի խօսք։

Լաուշաժանդիէն անունով գաղղիացի զօրավարը պատերազմի մէջ իր զօրքը յորդորելու համար այսպէս կը զուրցէ եղեր. "Ո՜ւռաջ երթամ՝նէ՝ ետևէս եկէք. ետ քաշուիմ՝նէ՝ զիս մեռուցէք. մեռնիմ՝նէ՝ վրէժս առէք „։